

ՀԱՅ ԱՅԲՈՒԲԵՆԸ ԳԼՈՒԽ-ԳՈՐԾՈՑ ՄԸՆ Է



ույն բնատիպարին հետևելով է, որ հայերը կապմեցին իրենց համար այբուբեն մը, գրական լեզու մը և գրականություն մը:

Հայտնի է, որ հայ այբուբենը գլուխ-գործոց մըն է: Հայ հնչաբանության հնչյուններն լուրացանչյուրը հատուկ նշանով մը նորագործած է, և սիստեմը այնքան լավ հաստատված է, որ Հայ Ազգին հայթայթած է հնչաբանության վերջնական արտահայտություն մը, արտահայտություն, որ պահպանված է մինչև այսօր առանց փոփոխություն մը կրելու, առանց բարեփոխում մը ստանալու պետք ունենալու, վասնզի սկիզբն իսկ անիկա կատարյալ էր:


Աստվածաշունչին թարգմանիչը հույն բնագիրը բառ առ բառ հայերենի վերածած է, առանց նշանակելի կերպով փոփոխելու որևէ ֆրազի

կառուցումը, պահելով միշտ բառերու կարգը: Իրավունք ունինք ուրեմն ըսելու, թե հույն բնատիպարին կատարելապես հետևած է հայ թարգմանիչը:

Աղոր հետևանքով՝ Հայաստան ունեցավ ճապուկ գրական լեզու մը, որ հույն բառապաշարին բոլոր արժեքները կարտաբերե: Այսպես կապմվեցավ գրական լեզու մը, որ ճոխ է և որ կրնար արտահայտել ամեն ինչ, որ հույն լեզուն կարող էր բացատրել:

Այդ լեզվին ճոխությունն ու ճկունությունը ուժ մը եղած են Հայ Ազգին համար՝ այդ թարգմանության օրեն ի վեր: Հայ Ազգը անոր հավատարիմ մնացած է, և ան ինքզինքը կպատվե՝ դեռ այսօր ալ տոնախմբելով այդպիսի ստեղծագործության մը հիշատակը:





ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ՄԱՐՄԱՐՅԱ ՆՈՐ ԳԵՐԵՋՄԱՆԱՔԱՐԸ